Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2024.
«Մարմաշեն գյուղում ՏՏ կենտրոնի ստեղծման» ծրագրի բացման արարողություն

2024 թվականի հունվարի 12-ին տեղի ունեցավ «Մարմաշեն գյուղում ՏՏ կենտրոնի ստեղծման» ծրագրի դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը (մինչև 71,225 ԱՄՆ դոլար) 2023թ.: Արարողությունը կայացել է Շիրակի մարզի Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնում:

Դրամաշնորհի պայմանագիրը կնքվել է Հայաստանում Ճապոնիայի դեսպան պրն. ՅՈՒՏԱԿԱ Առկիի և «Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամի տնօրեն տիկին Ամալյա Եղոյանի միջև: Արարողությանը ներկա էին նաև աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պարոն Նարեկ Մկրտչյանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության փոխնախարար պարոն Դավիթ Սահակյանը, Բարձր տեխնոլոգիաների նախարարության տեխնոլոգիական վարչության պետ պարոն Հրանտ Մկրտչյանը, Շիրակի մարզպետ պարոն Մուշեղ Մուրադյանը, Ախուրյան համայնքի ղեկավար պարոն Զավեն Մանուկյանը, ինչպես նաև համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ և դպրոցների տնօրեններ:

Այս ծրագիրը նպատակ ունի ապահովել տեղեկատվական կրթության հասանելիությունը Ախուրյան համայնքի դպրոցներում սովորող երեխաների համար՝ Մարմաշեն գյուղում տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն հիմնադրելով: Ավելին, կենտրոնը կտրամադրի մասնագիտական ուսուցում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում սոցիալապես խոցելի բնակչության համար, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղից տեղահանվածները, կանայք և երիտասարդները՝ զբաղվածության հնարավորություններ ստեղծելու և նրանց տնտեսական անկախության հետագա խթանման համար: Արդյունքում տարեկան մոտ 3800 ուսանող, ինչպես նաև 100 խոցելի անձ կունենան համապատասխանաբար տեղեկատվական կրթություն և մասնագիտական ուսուցում:

Ողջույնի կատարում հայկական ավանդական քանոնի լարային նվագարանով

Դեսպան Առկիի և տիկին Եղոյանի միջև դրամաշնորհային պայմանագրի ստորագրում

(Ձախից)դեսպան Առկի, նախարար Մկրտչյան, փոխնախարար Սահակյան



Այցելություն ծրագրի վայր